ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

1944 թ. ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում ստեղծվեց փիլիսոփայության սեկտոր, որը 1947 թ. դարձավ գիտահետազոտական առանձին հաստատություն: 1959 թ. փիլիսոփայության սեկտորը վերաձևավորվեց փիլիսոփայության և իրավունքի սեկտորի, իսկ 1969 թ. այդ սեկտորի հիման վրա ստեղծվեց ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը: Ավելի ուշ ինստիտուտում ավելացան կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների լաբորատորիան, մշակութաբանության, հոգեբանության և քաղաքագիտության բաժինները: 2003 թ. ինստիտուտը վերանվանվեց ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ: 1969–1973 և 1976–1990 թվականներին ինստիտուտի տնօրենն է եղել պրոֆեսոր Ս. Ս. Թովմասյանը, 1974–1976 թթ.՝ պրոֆեսոր Յա. Ի. Խաչիկյանը, 1990–1994 թթ.՝ պրոֆեսոր Ա. Մ. Էկմալյանը, 1994–1996 թթ.՝ պրոֆեսոր Հ. Ա. Գևորգյանը, 1996 թ. մինչ օրս ինստիտուտի տնօրենն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ա. Պողոսյանը:

Ինստիտուտում իրականացվում են փիլիսոփայության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության և իրավագիտության ոլորտի հետազոտություններ:

Փիլիսոփայություն

Հայ փիլիսոփայական միտքն ունի դարավոր ավանդույթներ: Հին շրջանի հայտնի հայ փիլիսոփաների աշխատությունները հայ հոգևոր մշակույթի մասն են կազմում: Հայ փիլիսոփայության պատմության ոլորտում Վ. Չալոյանի հետազոտությունները դարձան ծրագրային հայկական պատմափիլիսոփայական հետագա հետազոտությունների համար: Նրա աշխատանքները շարունակեցին Ս. Արևշատյանը, Գ. Գրիգորյանը, Ա. Թևոսյանը, Կ. Միրումյանը և ուրիշներ: Ս. Արևշատյանի աշխատանքները հիմք դրեցին միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական մտքի ուսումնասիրության նոր փուլի: Շնորհիվ Ս. Արևշատյանի՝ հրատարակվեցին միջնադարյան բազմաթիվ հայ փիլիսոփայական ստեղծագործությունների բնագրերը և դրանց թարգմանությունները:

Հայ փիլիսոփայության պատմության ոլորտում հետազոտությունները թույլ տվեցին բացահայտել ականավոր հայ մտածողների (Եզնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի, Գրիգոր Մագիստրոս, Հովհաննես Սարկավագ, Վահրամ Ռաբունի, Գրիգոր Տաթևացի, Հովնան Որոտնեցի, Սիմեոն Ջուղայեցի, Ստեփանոս Լեհացի և ուրիշներ) գաղափարական

ժառանգության տեղն ու նշանակությունը հայ փիլիսոփայության և մշակույթի պատմության համատեքստում: Ներկայացվեց հայ փիլիսոփայության պատմության նոր ամբողջական շարադրանք՝ սկսած անտիկ շրջանից մինչև XVIII դարը (Գ. Գրիգորյան, Ա. Թևոսյան, Կ. Միրումյան): Հատուկ նշանակություն ուներ գրական հայտնի հուշարձանների համահավաք բնագրերի գրաբարից աշխարհաբար և ռուսերեն լեզուներով թարգմանությունների հրատարակումը: Նշված ուղղություններով կատարված հետազոտությունները տեսական և փաստագրական հիմք դարձան 2007 թ. □Հայ փիլիսոփայության պատմություն. հին շրջան և վաղ միջնադար□ (Ս. Արևշատյան, Կ. Միրումյան) ակադեմիական համալիր հրատարակության համար:

1980 թ. UNESCO-ի որոշմամբ նշվեց հայ մեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթի 1500-ամյակը: Այդ կապակցությամբ ինստիտուտը կազմակերպեց միջազգային լայնածավալ գիտաժողով Երևանում և Մոսկվայում: Թողարկվեցին Դավիթ Անհաղթի անվան հուշամեդալ, կրծքանշան և հատուկ փոստային դրոշմանիշ փիլիսոփայի պատկերով: Լույս տեսան Անհաղթի փիլիսոփայական ժառանգությանը նվիրված մենագրություններ, գրքեր և գիտական հոդվածների ժողովածուներ, այդ թվում՝ Մոսկվայի «Наука» *հրատարակչությունը լույս ընծայեց Դավիթ Անհաղթի երկերի ժողովածուն՝* Давид Анахт. Сочинения (1980), *ինչպես նաև Ս. Արևշատյանի՝* «Давид Непобедимый – выдающийся философ Древней Армении» (1980), *Վ. Չալոյանի* «Философия Давида Анахта» (1984), *մենագրությունները:*

Հետազոտություններ են կատարվել նաև փիլիսոփայության ընդհանուր հիմնահարցերի, մասնավորապես, տրամաբանության բնագավառում: Առաջադրվել է բազմատրամաբանության գաղափարը, հատուկ ուշադրություն է նվիրվել ավանդական ձևական տրամաբանության և մաթեմատիկական տրամաբանության հարցերին, ձևակերպվել է լեզվաբանական լրացուցչության սկզբունքը (Գ. Բրուտյան): Հարկ է հատկապես նշել, որ Գ. Բրուտյանի աշխատություններով ու ջանքերով Հայաստանում հիմնվեց փիլիսոփայական փաստարկման դպրոց՝ գիտության մի նոր ուղղություն, որը միջազգային լայն ճանաչում գտավ:

Ինստիտուտի հիմնական հետազոտական ուղղություններից մեկը գիտության փիլիսոփայությունը և մեթոդաբանությունն է: 1960–70-ական թվականներին Հ. Գևորգյանի աշխատություններով կատարվեց անցում իմացաբանության ավանդական ընդհանուր խնդրակարգից դեպի գիտության փիլիսոփայության ու մեթոդաբանության ու տրամաբանության բնագավառ, որը դարձավ նրա ղեկավարած բաժնի հետազոտությունների առարկան և համամիութենական ճանաչում բերեց գիտության փիլիսոփայության, մեթոդաբանության ու տրամաբանության հայկական դպրոցին՝ «Գիտական գիտելիքի տրամաբանական վերլուծության փիլիսոփայական հարցերը» բնորոշ անվանումով: Այս հայեցակարգում հատուկ ուշադրություն է դարձված գիտական տեսությունների՝ տրամաբանական էքսպլիկացիայի չենթարկվող (չձևականացվող) կողմերի վրա, որոնք գիտելիքի տեսության մեջ մնում են իմացաբանական վերլուծության առարկա:

Քննության են առնված և վերաիմաստավորված են գիտության փիլիսոփայության համար հանգուցային՝ գիտելիքի ճշմարտության, հավանականության և հավաստիության, օբյեկտիվության ու օբյեկտիվացման հաս-կացությունները, բացորոշ ձևակերպված են գիտելիքի օբյեկտիվության ներգիտական չափանիշները, բացահայտված են այն տեսանկյունները, որոնցով գիտությունը ներկայանում է որպես մշակույթի երևույթ, վերլուծված են այդ գաղափարն արծարծող փիլիսոփայական տեսությունները, հատկապես քննված են գիտության պատմամշակութային մեկնաբանությունների հետ գիտական գիտելիքի օբյեկտիվության և գիտական բանականության համատեղելիության վճռորոշ հարցերը: Այս հայեցակարգի շրջանակներում տպագրվել են իմացաբանության ու գիտության մեթոդաբանությանը վերաբերող աշխատություններ, ինչպես և բնագիտության ու մաթեմատիկայի փիլիսոփայության հանգուցային հիմնահարցերն արծարծող աշխատություններ (Ս. Ավետիսյան, Լ. Աբրահամյան, Ս. Հակոբյան, Ա. Մանասյան): Հատկապես պետք է նշել Հ. Առաքելյանի՝ տրամաբանություն-մաթեմատիկա-ֆիզիկա հարաբերությանը վերաբերող տեսությունը, որը լավագույնս արտահայտված է «տրամաբանական ատոմներից դեպի ֆիզիկական օրենքներ» բանաձևի մեջ և որը հարուցել է հետաքրքրական բանավեճեր նաև արտասահմանում թե՛ փիլիսոփաների, և թե՛ տրամաբանների ու ֆիզիկոսների շրջանում:

Արևմտյան փիլիսոփայական-իմացաբանական ուսմունքների վերաբերյալ հետազոտությունների շարքում առանձնանում են Կ. Սվասյանի աշխատությունները՝ նվիրված գիտական ռացիոնալիզմի նկատմամբ այլընտրանքային տեսություններին: Վերջին տարիներին տպագրվել են Հ. Գևորգյանի հիմնարար աշխատությունները՝ նվիրված գիտության մեթոդաբանության հարցերին՝ «Փիլիսոփայություն: Պատմություն: Մշակույթ» (2005), «Философия. Наука. Культура» *(2010): Ինստիտուտի կոլեկտիվի ջանքերով լույս տեսավ երկար տարիներ մոռացության տրված Վ. Դերոյանի հայերեն թարգմանությամբ գերմանական փիլիսոփայության դասական Ի. Կանտի հիմնարար աշխատությունը՝ «Իմմանուիլ Կանտ. Զուտ բանականության քննադատություն» (2010):*

Գեղագիտության բնագավառում ուսումնասիրվել են գեղեցիկի էությանը, արվեստի առարկային, արվեստի առաջացմանը վերաբերող հիմնահարցերը, հատկապես՝ գեղեցիկի օբյեկտիվության չափանիշների և ճշմարտության հետ նրա հարաբերության հարցը (Ա. Քալանթար, Ե. Հակոբջանյան): Հետազոտվել են ազգային գիտակցության գեղագիտական դրսևորումները, որի նպատակն էր հայ ազգային գեղարվեստական-գե-դագիտական մտածողության առանձնահատկությունների վերհանումը: Շնորհիվ Յա. Խաչիկյանի բազմամյա բեղմնավոր գիտական գործունեության՝ լույս են ընծայվում գեղագիտության երկու մատենաշար, ինչպես նաև՝ հայ գեղագիտության վերաբերյալ բազմաթիվ մենագրություններ («Очерк развития эстетической мысли в Армении», М., 1976)*, այդ թվում՝ նրա մեծ ավարտական աշխատությունը՝* «Вопросы истории и теории эстетики» (2011)*:*

Սոցիալական փիլիսոփայության ոլորտում հետազոտվել են աշխատանքի, տեխնիկայի, գիտության և գիտատեխնիկական առաջընթացի վերաբերյալ հարցերը, բացահայտվել են «պրակտիկա-տեխնիկա-գիտություն» համակարգի ձևավորման և զարգացման կառուցվածքը, ինչպես նաև՝ գիտության, տեխնիկայի, արտադրության ու հասարակական պրակտիկայի հարաբերակցության առանձնահատկությունները պատմական տարբեր ժամանակաշրջաններում (С. Товмасян. Труд и техника: Очерк философских проблем, 1965; А. Экмалян. Наука: генезис и социальная функция, 1983)*:*

Նշանակալից արդյունքներ են ստացվել լոկալ քաղաքակրթությունների տեսության, սոցիոլոգիայում նեոպոզիտիվիզմի հիմնական ուղղությունների, անձի և ապրելակերպի հետազոտություններում (Է. Մարգարյան, Ս. Ալահվերդյան, Ռ. Նավասարդյան, Մ. Հարությունյան. Э. Маркарян. О концепции локальных цивилизаций: Критический очерк, 1962)*:*

Ներկայումս ուսումնասիրություններ են կատարվում արդի հայագիտության կարևոր հիմնախնդիրներից մեկի՝ ազգային ինքնագիտակցության հետազոտության ուղղությամբ:

Մշակույթի տեսության բնագավառում գիտական հետազոտությունների համար որպես ելակետային գաղափարական-կառուցվածքային հիմք է ծառայել պրոֆեսոր Է. Մարգարյանի հայտնի հայեցակարգը՝ մշակույթը որպես մարդկանց արտակենսաբանական գործունեության ինքնատիպ տեխնոլոգիա, որն ապահովում է հատուկ «ադապտիվ-ադապտացնող» գործառույթ սոցիալական համակարգերի գոյության և էվոլյուցիայի համար: Մշակույթին ու մշակութային ավանդույթներին վերաբերող տեսական գաղափարները կիրառվել են նաև պատմամշակութային իրադարձությունների դեպքում, մասնավորապես՝ էթնիկական մշակույթների հետազոտության մեթոդաբանական սկզբունքների բացահայտման համար (Է. Մարգարյան, Կ. Սարինգուլյան, Է. Մելքոնյան. Э. Маркарян. Очерки теории культуры, 1969; К. Сарингулян. Культура и регуляция деятельности, 1982; Э. Маркарян, К. Сарингулян, Э. Мелконян. Культура жизнеобеспечения и этнос, 1983*): Վերջին տարիների գիտական մշակումներում գերիշխում է հետազոտությունների այն ուղղությունը, որի շրջանակներում փորձեր են ձեռնարկվում կիրառելու մշակույթի և ավանդույթների տեսությունների ընդհանուր սկզբունքները ազգային և գլոբալ մակարդակներում մարդկային գոյության ու զարգացման ռազմավարական խնդիրների լուծման համար: Այս շարքում լույս են տեսել փիլիսոփայական շրջանակներում լայն քննարկումներ առաջացրած Է. Մարգարյանի մենագրությունները՝* «Гуманизм XX столетия. Идеология самосохранения человечества» (2008), «Глобальные аспекты Геноцида армян. Опыт культурологического анализа» (2005), «Новые вызовы и глобальные угрозы международной безопасности в начале 21-го века», (2004)*:*

Սոցիոլոգիա

1976 թ. Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում հիմնադրվեց կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների բաժինը (ղեկ. Լ. Հարությունյան): Այդ ժամանակաշրջանում հատկապես զարգանում էր արդյունաբերական սոցիոլոգիան, բազմաթիվ կիրառական հետազոտություններ էին անցկացվում Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում: Ակադեմիական սոցիոլոգները հետազոտում էին հանրապետության շրջաններում և գյուղերում բնակվող մարդկանց կենսապայմանները և կենսամակարդակը, աշխատանքի նկատմամբ աշխատողների վերաբերմունքը և նրանց արժեքային կողմնորոշումները («Образ жизни и ценностные ориентации личности» (1979), *գյուղական բնակչության արտագաղթը դեպի քաղաքներ, հայկական ընտանիքի սոցիալական վիճակը, ինչպես նաև՝ սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանության և մեթոդիկայի մի շարք հարցեր* [Г. Погосян. Метод интервью и достоверность социологической информации (1985), *Գ. Պողոսյան. Ինֆորմացիայի հավաքման մեթոդները սոցիոլոգիայում (1987) թ.]: Հարցազրույցի մեթոդիկայի վերաբերյալ Գ. Պողոսյանի աշխատանքները լայն ճանաչում ստացան երկրում և ընդգրկվեցին սոցիոլոգիայի հեղինակավոր հանրագիտարանային հրատարակություններում* («Социологическое исследование. Словарь-справочник», М., 1991); «Энциклопедический социологический словарь», М., 1995; «Российская социологическая энциклопедия», М., 1999)*:*

1988 թ.՝ Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո, սոցիոլոգիական հետազոտությունների բաժինը Գ. Պողոսյանի ղեկավարությամբ սկսեց մշակել աղետների սոցիոլոգիան որպես սոցիոլոգիայի բնագավառում հետազոտությունների նոր ուղղություն, որն առաջինն էր և այդ ժամանակ միակը Խորհրդային Միությունում: Այդ ժամանակ ակադեմիական հետազոտություններում սկսեցին ձևավորվել գիտական նոր ուղղություններ, ինչպիսիք են՝ արտագաղթի և փախստականների սոցիոլոգիան, աղքատության սոցիոլոգիան, ընտանիքի սոցիոլոգիան, երիտասարդության և մանկության սոցիոլոգիան, էթնոսոցիոլոգիան և այլն (Migration in Armenia. Ed. G. Poghosyan, Yerevan, 2001; M. Karakashian, G. Poghosyan. Armenian Migration and a Diaspora: a Way of Life”. - In: Adler, L., Gielen, U. “World Migration”. New York: Greenwood Publishing Group, Inc. 2003)*:*

Ինստիտուտի սոցիոլոգները զեկուցումներով հանդես են եկել համաշխարհային սոցիոլոգիական կոնգրեսներում (Մադրիդ, Բիլլեֆելդ, Մոնրեալ, Թայբեյ, Գյոթենբորգ), ինչպես նաև բազմաթիվ միջազգային գիտաժողովներում: Մի քանի տարիների ընթացքում սոցիոլոգներն ընդլայնել են իրենց միջազգային կապերը UNDP, UNICEF, UNHCR, IOM, NRC, Save the Children, USAID, OSI, Soros Foundation *և միջազգային այլ կազմակերպությունների աջակցությամբ և նրանց հետ համագործակցության միջոցով: 1983 թ. Գիտությունների ակադեմիային կից ստեղծվեց Խորհրդային սոցիոլոգիական ասոցիացիայի հայկական մասնաճյուղը (ղեկ.՝ Լ. Կարապետյան): 1990 թ. հայ սոցիոլոգներն իրենց հիմնադիր ժողովի ժամանակ հիմնադրեցին Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան (նախագահ՝ Գ.*

Պողոսյան) որպես ինքնուրույն կազմակերպություն և դուրս եկան նախկին Խորհրդային սոցիոլոգիական ասոցիացիայի կազմից: 1991 թ. Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան՝ նախկին խորհրդային հանրապետությունների թվում առաջիններից մեկը, ընդունվեց Միջազգային սոցիոլոգիական ասոցիացիայի կազմում, իսկ 2006 թ.՝ ընդունվեց նորաստեղծ Եվրոպական սոցիոլոգիական ասոցիացիայի կազմում:

Անկախ պետականության վերականգնումից հետո հայ հասարակության փոխակերպման գործընթացներին նվիրված սոցիոլոգների երկար տարիների հետազոտությունները ստացան իրենց ընդհանրացումը Գ. Պողոսյանի բազմաթիվ հոդվածներում և նրա հիմնարար մենագրություններում՝ «Современное армянское общество: особенности трансформации», *որը լույս է տեսել Մոսկվայում, ACADEMIA հրատարակչությունում 2005 թ., իսկ 2006 թ.՝ Երևանում «Հայ հասարակությունը XXI դարասկզբին» վերնագրով:*

Գիտական կապերի շնորհիվ Ինստիտուտի սոցիոլոգները մասնակցում են միգրացիայի, թրաֆիքինգի, ժողովրդավարական ինստիտուտների զարգացման և հասարակության փոխակերպման հարցերին նվիրված խոշոր միջազգային ծրագրերին (G. Poghosyan. Out-Migration from Armenia - In «Transboundary Migration in the Post-Soviet Space. Three Comparative Case Studies», N. Genov, T. Savvidis (eds.), Peter Lang, Berlin, 2011; Г. Погосян. Анализ миграционных потоков в Армении. – В кн. «Транзитная миграция и транзитные страны. Теория, практика и политика регулирования», М., 2009; T. Hofmann. «One Nation – Three Sub-Ethnic Groups. The Case of Armenia and Her Diaspora», Yerevan, 2011)*:*

Քաղաքագիտություն

Քաղաքական սոցիոլոգիայի և քաղաքականության փիլիսոփայության խնդիրների վերաբերյալ գիտական հետազոտություններն Ինստիտուտում անց էին կացվում դեռևս XX դարի 90-ական թվականների կեսերից: Այդ աշխատանքների արդյունքում 2000 թ. սկզբին կազմավորվեց թեմատիկ խումբ, իսկ հետո՝ նաև քաղաքական հետազոտությունների բաժին (Ա. Մանասյան. Ղարաբաղյան հակամարտությունը հայոց քաղաքական գիտակցության հայելում, 2004, К. Мирумян. История политической науки, ч. I–II, Ереван, 2004–2005, *Լ. Շիրինյան. Նոր աշխարհակարգը և Հայաստանը, 2006):*

Գիտակցելով նոր հայկական ժողովրդավարական պետության կառուցման համար քաղաքագիտական հետազոտությունների մեծ կարևորությունը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորված երկրաքաղաքական իրավիճակի ամբողջ բարդությունը՝գիտական խորհուրդը որոշում ընդունեց զարգացնել գիտական այս նոր ուղղությունը՝այդ գործում ընդգրկելով դիպլոմավորված մասնագետների, և նոր երիտասարդ կադրեր պատրաստել ինստիտուտի ասպիրանտուրայում:Վերջին մի քանի տարիների ընթացքում քաղաքագիտության բնագավառում պաշտպանվել են տասներկու թեկնածուական և երկու դոկտորական ատենախոսություններ:Հանրապետությունում առաջին անգամ ինստի-

տուտում ձևավորվել և գործում էր քաղաքագիտության և սոցիոլոգիայի գծով թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհուրդը (2008–2010 թթ.): Քաղաքագիտության բաժնի հիմնական թեմատիկան վերաբերում է երիտասարդ հայկական պետության առջև կանգնած երկրառազմավարական և երկրաքաղաքական մարտահրավերներին՝ հաշվի առնելով դարաբաղյան հիմնահարցը, ինչպես նաև՝ հանրապետության ներսում տեղի ունեցող ներքաղաքական գործընթացների զարգացման խնդիրները, հեռանկարները և բնույթը: Քաղաքագիտական հետազոտությունների առաջին արդյունքները տպագրվել են աշխատակիցների բազմաթիվ հոդվածներում և մի քանի մենագրություններում, այդ թվում՝ այն աշխատանքներում, որոնք նորովի էին վերլուծում և լուսաբանում քաղաքական գործընթացները ինչպես գլոբալ, այնպես էլ՝ տարածաշրջանային և տեղական բնույթի (Հ. Սուքիասյան. Տեղեկատվական հասարակություն. սոցիալ-քաղաքական հիմնախնդիրներ, 2009, Է. Օրդուխանյան. Իշխանություն և ընդդիմություն. քաղաքական խոսույթի վերլուծություն, 2010, T. Torosyan. Conflict Resolution in the Framework of International Law. Case of Nagorno Karabakh, 2010, *Լ. Շիրինյան. Արևմուտքի անկումը, 2010, Է. Օրդուխանյան, Հ. Սուքիասյան. Քաղաքական մշակույթի առանձնահատկությունները Հայաստանում, 2012):*

Իրավագիտություն

Ինստիտուտի Պետության և իրավունքի բաժնի հետազոտական ծրագիրը ներառում էր իրավունքի պատմության և իրավունքի հուշարձանների, Հայաստանի պետականության հարցերի, ինչպես նաև՝ իրավունքի ձևավորման տեսական հարցերի, շրջակա միջավայրի իրավական ապահովման և պաշտպանության վերաբերյալ հետազոտություններ: Այդ հետազոտությունների հիմնական արդյունքներն արտացոլված են Ա. Բեգյանի, Ռ. Ավագյանի, Վ. Ստեփանյանի, Ն. Այվազյանի, Գ. Սարգիսովի կոլեկտիվ աշխատություններում և մենագրություններում («История государства и права Советской Армении», т. 1, 1974, т. 2, 1978; А. Бегиян. Развитие советской государственности в Армении, 1968)*:*

90-ական թվականներից սկսվեց բաժնի գիտահետազոտական գործունեության որակապես նոր փուլը: Առաջին անգամ հայ իրավագիտությունում արխիվային նյութերից հանված նոր աղբյուրների հիման վրա փորձեր արվեցին նորովի հետազոտել, գիտականորեն հիմնավորել և գիտական շրջանառության մեջ դնել պառլամենտարիզմի հիմնարար հարցերը, հայ իրավաքաղաքական մտքի պատմությունը, միջնադարյան Հայաստանի իրավունքի պատմությունը: Տպագրության են երաշխավորվել Ռ. Ավագյանի ղեկավարությամբ՝ առաջին անգամ ռուսերեն թարգմանված հիմնարար գիրքը՝ նվիրված Հայաստանի իրավական մտքի պատմությանը (Р. О. Авакян, Р. Р. Авакян. Истоки Армянской правовой мысли, 2008) *և Գ. Սաֆարյանի գրքերը («Միջնադարյան հայ իրավունքը և իրավաքաղաքական միտքը, X–XIII դդ.», 2008, «Իրավունքի պատմության և տեսության հիմնահարցեր», 2010):*

Մեծ ուշադրություն է դարձվել իրավական գործունեության տեսական և գործնական հարցերին, ինչպես նաև՝ ՀՀ նոր խորհրդարանի օրենսդրական գործունեության առանձնահատկությունների վերլուծությանը: Տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեն նաև ՀՀ օրենսդրության համակարգում հակասությունների ու բացթողումների հիմնավորումը և դրանց հաղթահարման հիմնական ուղիների վերլուծությունը: Վերոնշյալ հարցերի համալիր հետազոտությունը հնարավոր դարձրեց կանխատեսել ազգային օրենսդրության համակարգի կատարելագործման և զարգացման հիմնական ուղղությունները և միտումները [Հ. Խաչատրյան. Սահմանադրական վերահսկողություն և սահմանադրական դատարան, 1993, Հ. Խաչատրյան. Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը, 1997, 2001 (ռուսերեն)]:

Ռ. Ավագյանի աշխատանքներում առաջին անգամ փորձ արվեց դասակարգել բնության և շրջակա միջավայրի քրեաիրավական պաշտպանության դեմ կատարված հանցագործությունները՝ ըստ իրավախախտման օբյեկտի առանձնահատկությունների («Շրջակա միջավայրի աղտոտումը որպես քրեորեն պատժելի հանցանք», 1975, «Բնության իրավական պաշտպանությունը ՀԽՍՀ-ում», 1979, «Սևանա լճի իրավական պաշտպանությունը», 2003):

Իրավակիրառման հարցերի գիտական վերլուծությունն արդիական է հատկապես անցումային փուլում գտնվող պետությունների համար: Հաշվի առնելով այս հանգամանքները՝ բաժինն իրականացնում է տեսական հետազոտություններ իրավակիրառման, արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանության իրականացման համալիր խնդիրների շուրջ [Ռ. Ավագյան. Արդարադատության հարցեր (2010), և նրա գիրքը՝ «Մարդու իրավունքներ. Քրեաիրավական երաշխիքներ», 2007]:

Վերջին տարիներին Հ. Ստեփանյանի ջանքերի շնորհիվ սկսվել է նոր գիտական ուղղության՝ իրավունքի ֆենոմենոլոգիայի տեսական-մեթոդաբանական խնդիրների ակտիվ մշակումը (Հ. Ստեփանյան. «Իրավունքի տեսության հիմնահարցերը. ֆենոմենոլոգիական մոտեցում», 2006, և նրա՝ «Նոր իրավաբմբռնման անհրաժեշտությունը», 2011, «Իրավունքի գոյաբանություն», 2012):

ИНСТИТУТ ФИЛОСОФИИ, СОЦИОЛОГИИ И ПРАВА

ГЕВОРГ ПОГОСЯН

Р е з ю м е

Институт философии, социологии и права был основан в 1969 году.

Основными научными направлениями деятельности Института являются:

- история армянской философии и эстетической мысли;
- теоретическая философия, логика и методология науки;

• социология и политология: проблемы социальных трансформаций в Армении; миграции населения и политическое отчуждение; геополитическая ситуация в регионе;

• теория и история права Армении, феноменологические основы теории права, проблемы взаимоотношения права и безопасности.

Основные результаты, полученные в Институте за последнее время:

• создание научной школы по изучению армянского философского наследия и эстетической мысли; издание фундаментальной монографии «История армянской философии» и целого ряда монографий, посвященных философским концепциям выдающихся армянских мыслителей прошлого, издание монографии «Вопросы теории и истории эстетики» и антологии «Армянские деятели культуры об искусстве»;

• разработка концепции перехода от традиционной общей проблематики гносеологии в область логики, философии и методологии науки, публикация труда «Философия. История. Культура», книг «От логических атомов к физическим законам», “LMP fundamental theory”, перевод на армянский язык и издание классической работы немецкого философа И. Канта «Критика чистого разума»;

• исследование социально-политических проблем современного армянского общества и разработка национальных моделей и стратегий его дальнейшей модернизации; изданы монографии и книги как в республике, так и зарубежом: «Армянское общество в трансформации», «Современное армянское общество. Особенности трансформации», «Армянское общество на пороге XXI века», «Армения. Отчужденное общество», “Armenian Society in Transition”, “Out-migration from Armenia – in Transboundary Migration in the Post-Soviet Space”, “One Nation – Three Sub-Ethnic Groups”, «Карабахская освободительная борьба в армянском политическом сознании», «Новый мировой порядок и Армения», «Власть и оппозиция: анализ политического дискурса», «Информационное общество: социально-политические проблемы», «Особенности политической культуры в Армении»;

• исследование основных вопросов национального законодательства и правоприменительной практики, а также теоретических проблем права и истории армянской правовой мысли; издание монографий и книг: «Средневековое армянское право и политико-правовая мысль X–XIII веков», «Проблемы теории и истории права», «Проблемы теории права. Феноменологический подход», «Необходимость нового правопонимания», «Вопросы правосудия», «Право и преступление».

INSTITUTE OF PHILOSOPHY, SOCIOLOGY AND LAW

GEVORG POGHOSYAN

S u m m a r y

The Institute of Philosophy, Sociology and Law was established in 1969.

The main scientific directions of the Institute are:

• history of the Armenian philosophy and aesthetic thought;

• theoretical philosophy, logic and methodology of the science;

• sociology and political science: problems of the social transformations in Armenia, migration of population and political alienation; geopolitical situation in the region;

• theory and history of law in Armenia, phenomenological foundations of the theory of right, the problems of relations between law and security.

The main results got recently are:

• foundation of the scientific school on study of the Armenian philosophical heritage and aesthetic thought; publication of the fundamental monograph “History of the Armenian Philosophy” and a number of monographs, devoted to the philosophical concepts of prominent old Armenian thinkers; the publication of the monograph “Problems of Theory and History of Aesthetics” and the anthology “The Figures of Armenian Culture about Art”;

• developing of the concept of transition from the traditional common problems of epistemology into the area of logic, philosophy and methodology of science; publication of the monograph “Philosophy. History. Culture”, and books “From the Logic Atoms to the Physical Laws”, “LMP Fundamental Theory”, translation into Armenian and publication of the classic work of the German philosopher I. Kant's “Critique of Pure Reason”;

• a study of socio-political problems of the modern Armenian society and development of the national models and strategies for further modernization of society; publication of monographs and books both in Armenia and abroad: “Armenian Society in Transformation”, “Modern Armenian Society. Peculiarities of Transformation”, “Armenian Society on the Threshold of the 21st Century”, “Armenia. The Alienated Society”, “Armenian Society in Transition”, “Out-migration from Armenia – in Transboundary Migration in the Post-Soviet Space”, “One Nation – Three Sub-Ethnic Groups”, “Karabakh Liberation Struggle in Armenian Political Consciousness”, “New World Order and Armenia”, “Power and Opposition: the Analysis of Political Discourse”, “Information Society: Socio-Political Problems”, “Features of the Political Culture in Armenia”;

• a study of the main issues of the national legislation and law enforcement practice, as well as theoretical problems of law and the history of the Armenian legal thought; publication of monographs and books: “Medieval Armenian Law and Political and Legal Thought in the 10th–13th Centuries”, “Problems of Theory and History of Law”, “Problems of Theory of Law. A Phenomenological Approach”, “The Need for a New Lawunderstanding”, “The Questions of Justice”, “The Law and Crime.”